Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» *(Կ-826-28.12.2020-ՊԻ-011/0)* ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» *(Կ-8261-28.12.2020-ՊԻ-011/0)* ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	1.Առաջարկվել է Հոդված 1-ում «դեպքերում» բառը փոխարինել «անձանց վերաբերյալ վարույթներով» բառերով.	Ընդունվել է	Ընդունվել է

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	2. Առաջարկվել է Հոդված 2-ի՝ 2.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «2.1 Այն օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ով ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ով ենթակա է հանձնման օտարերկյա պետությանը, կարող է դիմել ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում: Սույն մասում նշված անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնող կամ այլ մարմնի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում՝ Սահմանապահ զորքերի, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Ոստիկանության և լիազոր մարմնի պաշտոնատար անձը՝ քրեական հետապնդում հարուցելու, ազատությունից զրկելու, այդ թվում բերման	Ընդունվել է	Ընդունվել է

		ենթարկելու, ձերբակալելու կամ ազատությունը սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում պարզաբանում է ապաստանի կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար դիմելու վերջիններիս իրավունքը, որի վերաբերյալ տրվում է գրավոր ծանուցագիր, և ապահովում նրանց իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրանց դիմումները լիազոր մարմնին ուղարկելու միջոցով:»:		

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	3. Առաջարկվել է Հոդված 3-ում՝ «ուղարկվում է ապաստան հայցողին» բառերից հետո լրացնել «՝ հայերեն և ապաստան հայցողին հասկանալի լեզվով, » բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	4. Առաջարկվել է Հոդված 4-ի 1-ին մասում «5» թիվը փոխարինել 10 թվով, իսկ 2-րդ մասում՝ «կայացրած որոշման մասին տեղեկանալու» բառերը փոխարինել «որոշման կայացման մասին իրազեկվելու» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված	5. Առաջարկվել է Հոդված 5-ի 1-ին մասում «կրկնակի» բառը հանել, իսկ «(երկրորդ)» բառը փոխարինել «երկրորդ» բառով, 5-րդ մասում «10» թիվը փոխարինել «15 թվով», և ավելացնել նոր՝ 6-րդ մասը՝ հետևյալ բովանդակությամբ. «6. Սույն հոդվածի 3-րդ մասի դրույթները չեն կիրառվում այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձի կամ ապաստանի միասնական դիմում ներկայացրած և վերջնական որոշմամբ մերժված անձի ընտանիքի անդամը (խնամքի տակ գտնվող անձը) անհատական ապաստանի դիմում է ներկայացնում:»:	Ընդունվել է	Ընդունվել է

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված	6. Առաջարկվել է Հոդված 6-ի՝ 1-ին մասում կատարել փոփոխություն՝ «տասներորդ» բառը փոխարինել «իննսուներորդ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	1. Առաջարկվել է Հոդված 1-ի և Հոդված 3-ի բովանդակությունները փոփոխել, միավորել մեկ՝ Հոդված 1-ում, և մինչև «ԳԼՈՒԽ 31.6» բառերը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության ՀՕ-139-Ն օրենսգրքի 5-րդ բաժինը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 31.6 գլխով.»: 2. Հոդված 2-ը առաջարկվել է հանել: 3. Առաջարկվել է Հոդված 222.17-ի առաջին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 222.17. 1. Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կարող է դիմել այն օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ով ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում	Ընդունվել է	Ընդունվել է

		Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ով ենթակա է հանձնման օտարերկյա պետությանը՝ ապաստանի հայցի կամ փախստականի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած անբարենպաստ վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու պահանջով:»: 4. Առաջարկվել է Հոդված 222.17-ի երկրորդ մասը հանել: 5.Առաջարկվել է Հոդված 222.18-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 222.18. Վարչական դատարան դիմելը եւ գործերի քննության ժամկետները 1. Սույն օրենսգրքի 222.17 հոդվածի 1-ին մասում նշված գործերով վարչական դատարան հայցադիմում կարող է ներկայացվել «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած անբարենպաստ	Ընդունվել է	

		վարչական ակտի մասին իրազեկվելու օրվանից սկսած՝ 15 օրվա ընթացքում: 2. Պատասխանողը հայցադիմումի պատասխան կարող է ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում: 3. Վարչական դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում սույն օրենսգրքով սահմանված կարգով պարտավոր է քննել եւ կայացնել ու հրապարակել գործն ըստ էության լուծող դատական ակտ:»: 6. Առաջարկվել է Հոդված 222.19-ը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 222.19. Վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքարկման ժամկետները 1. Սույն օրենսգրքի 222.18 հոդվածի 3-րդ մասում նշված գործով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո եւ նույն	Ընդունվել է	

		ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննության կարգով: 2. Վերաքննիչ բողոքի պատասխան կարող է ներկայացվել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը ստանալուց հետո՝ մինչեւ գործի դատաքննությունը: 3. Վերաքննիչ դատարանը բողոքը քննում եւ համապատասխան որոշում է կայացնում ու հրապարակում՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից մեկամսյա ժամկետում: 4. Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և այդ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում: Վճռաբեկ դատարանը սույն գործերով վարույթ ընդունելու որոշումը կայացնում է 15-օրյա ժամկետում և նույն ժամկետով կարող է կասեցնել վերաքննիչ դատարանի որոշման կատարումը: 5. Վճռաբեկ դատարանը բողոքը		

		քննում եւ համապատասխան որոշում է կայացնում ու հրապարակում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից 10-օրյա ժամկետում:»:		

Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	7. Առաջարկվել է Հոդված 222.20.-ը հանել: 8. Առաջարկվել է Հոդված 2-ի՝ 1-ին մասում կատարել փոփոխություն՝ «տասներորդ» բառը փոխարինել «իններորդ» բառով: 9.Առաջարկվել է Հոդված 2-ի՝ 2-րդ և 3-րդ մասերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է